

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.

Խ. Արժանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության
ամբիոնի 2020թ. օգոստոսի 31-ի առցանց նիստի

/ առցանց նիստի հղումը՝ <https://meet.google.com/cvz-biyj-zsk/> /

Օրակարգ

1. 2020-2021 ուսումնական տարվա առկա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի նախապատրաստական աշխատանքներ: ԱՈՒՄՓ-ների քննարկում և հաստատում:

*Ջեկուցող՝ ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ Թերեզա Ազատյան*

2. Ընտրովի դասընթացների թեմաների քննարկում և հաստատում:

*Ջեկուցող՝ ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ Թերեզա Ազատյան*

3. Ընթացիկ հարցեր

1. Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Թերեզա Ազատյանը ողջունեց ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմին, մաղթեց հաջող ուսումնական տարի և արդյունավետ փոխհամագործակցություն:

Անդրադառնալով օրակարգի առաջին հարցին Թ. Ազատյանը նշեց, որ 2020-2021 ուսումնական տարում ամբիոնն ունի 14.842 ժամ, որը բաշխվել է ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը համալրող 22 դասախոսի միջև: Ամբիոնի վարիչ Թ. Ազատյանը նշեց, որ 2020-2021 ուսումնական տարում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի հետ չի աշխատելու Անի Գրիգորյանը, փոխարենը ամբիոնի կազմը համալրելու է Սուսաննա Մուրադյանը: Ամբիոնը նախորդ 22,5 դրույքի փոխարեն ունի 18,5 դրույք դրույքաչափ, որը հիմնականում արտահայտվել է մրցույթով

չընտրված դասախոսների դրույքի բաշխման ժամանակ, որը մոտավորապես կազմվել է 0,75 դրույք: Թ. Ազատյանը նշեց նաև, որ լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնը մոտավորապես 600 ժամ է փոխանցել, որը հիմնականում ձևավորվել է ամբիոնի դասախոսների կողմից ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի դեկավարումով և պրակտիկային՝ որպես հոգեբան կցվելու ժամերով:

Ընդգծվեց նաև, որ բակալավր կրթական ծրագրի առաջին կուրսերի ուսանողների դասերը կկազմակերպվեն առերես, մինչդեռ մնացյալ բոլոր կուրսերը դասերը կշարունակեն առցանց տարբերակով: Թ. Ազատյանի առաջարկով առաջին կուրսերի ուսումնական գործընթացի կազմակերպչական հարցերին անդրադարձավ նաև մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Սվետլանա Մուրադյանը: Վերջինս նշեց, որ բակալավր կրթական ծրագրի առաջին կուրսերի ուսանողների ընդունելությունը ֆակուլտետը կազմակերպելու է 11:30, ուսանողները պետք է հերթով, հնարավորինս առանց կուտակումների առաջին հարկում իրականացնեն ջերմաչափում, այնուհետև ուսանողական խորհրդի անդամների ուղեկցությամբ մոտենան համապատասխան լսարաններ: Բոլոր ուսանողները պարտադիր պետք է կրեն պաշտպանիչ դիմակներ, սահմանափակեն շփումը, հետևեն առողջության համար անվտանգության կանոններին, որին պետք է հետամուտ լինեն նաև դասախոսներն ու լսարանների պատասխանատուները: Ֆակուլտետի դեկանի և ամբիոնների վարիչների հետ նախապես քննարկման և պայմանավորվածության համաձայն վերոնշյալ բոլոր գործառույթների համար սահմանվել են պատասխանատուներ, որը ներկայացված է կցված ֆայլում (աղյուսակ 1):

Թ. Ազատյանը նշեց նաև, որ ամբիոնի մասնագետի կողմից ստեղծվում են class հարթակները, համապատասխան դասախոսներին ուղարկվում են հղումները: Պահանջվում է հետևողական լինել, ժամանակին ընդունել հրավերը, կցվել հարթակին, տեղադրել ԱՌԻՄՓ-ներն ու առարկայական տրոհումները: Թ. Ազատյանը նշեց նաև, որ կազմվել է երկու խումբ՝ բակալավր կրթական ծրագրի և մագիստրատուրա կրթական ծրագրի ներառական կրթություն /հիմնական/ առարկայի ԱՌԻՄՓ-ները, առարկայական

տրոհումները, դասախոսական փաթեթները վերանայելու և համապատասխան անհրաժեշտ փոփոխություններ կատարելու համար:

Օրակարգի առաջին հարցը առաջարկվեց ամփոփել արդեն իսկ քննարկված ԱՌԻՄՓ-ների հաստատումով:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմին հորդորեց ուշիմ լինել ընտրովի դասընթացների թեմաների ընտրությանը, որի կրկնություններից և անճշտություններից խուսափելու համար առաջարկվեց մինչև ս. թ. սեպտեմբերի 10-ը ըստ դասաբաշխման ամբիոնի էլ. հասցեին ուղարկել համապատասխան դասընթացների անվանումները, կուրսը, բաժինը, հակիրճ բնութագիրը: Այս հարցի հետ կապված ամբիոնի վարիչը նշեց, որ ամբիոնը հնարավորություն ունի մագիստրոսի կրթական ծրագրի հատուկ մանկավարժություն և հատուկ հոգեբանություն բաժինների առաջին կուրսերի ընտրովի դասընթացները կիսելու, որը ի նպաստ է ամբիոնի աշխատանքների կազմակերպմանը:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ինեսսա Հարությունյանը ներկայացրեց ամբիոնի facebook-յան պաշտոնական էջի գրանցած հաջողությունները, որը ակնհայտ է եղել թե՛ նամակագրությունների տեսքով, թե՛ հետաքրքրվողների, թե՛ հավանողների բանակով, թե՛ 2020-2021 ուսումնական տարում

ընդունելության արդյունքներով: Ի. Հարությունյանը հորդորեց դասախոսներին լինել էլ ավելի ակտիվ և հետևողական, կիսվել հարթակում տեղադրված նորություններով:

Նիստի նախագահ՝

Թերեզա Ազատյան

Նիստի քարտուղար՝

Սվետլանա Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.

Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության
ամբիոնի 2020թ. սեպտեմբերի 25-ի առցանց նիստի

/ առցանց նիստի հղումը՝ <https://meet.google.com/xtu-odux-yxc?authuser=0/>

Օրակարգ

4. 2019-2020 ուստարվա 4-րդ կուրսերի, 2-րդ կիսամյակի հետաձգված
պրակտիկայի կազմակերպման ընթացքի վերաբերյալ

Ջեկուցող՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Վերա Մարուքյան

5. 2020-2021 ուստարվա ամբիոնի դասախոսների Google classroom էլ.
հարթակի մշտադիտարկման արդյունքների քննարկում, վերլուծում

Ջեկուցող՝ դասախոս Մարինե Մկրտչյան

6. Ընթացիկ հարցեր

Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ մանկավարժական
գիտությունների թեկնածու, դոցենտ Թերեզա Ազատյանը ողջունեց ամբիոնի
պրոֆեսորադասախոսական անձնակազմին և խոսքը տրամադրեց ամբիոնի
պրակտիկայի պատասխանատու, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Վերա Մարուքյանին օրակարգի առաջին հարցը ներկայացնելու:

1. Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի պրակտիկայի
պատասխանատու, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Վերա
Մարուքյանը, ներկայացրեց 2019-2020 ուստարվա 4-րդ կուրսերի, 2-րդ կիսամյակի
հետաձգված պրակտիկայի կազմակերպման ընթացքը: Համաձայն որի նշեց, որ
պրակտիկայի վարչության, ֆակուլտետի դեկանի, ամբիոնի վարիչի հետ համատեղ

քննարկումների արդյունքում որոշում է կայացվել հեռակա ուսուցման համակարգի բակալավր կրթական ծրագրի չորրորդ կուրսերի պրակտիկան /որը իրականում պետք է կազմակերպվեր նախորդ կիսամյակ/ առցանց ձևաչափով իրականացնել սեպտեմբերի 23-ից մինչև հոկտեմբերի 22-ն ընկած ժամանակահատվածում, որը արդեն մեկնարկել է: Առցանց տարբերակով հանդիպում-քննարկումներ են կազմակերպվել, քննարկվել են ուսանողներին մտահոգող հարցերը, որոնք հիմնականում պայմանավորված են եղել առցանց տարբերակով գործընթացի կազմակերպմանը: Ուսանողները կցված են համապատասխան հաստատություններին, ուսանողները քննարկումներ են ունեցել իրենց պրակտիկայի ղեկավարների հետ, ստացել են անհրաժեշտ հանձնարարություններ: Մինևույն ժամանակ ամբիոնի մասնագետի կողմից ստեղծվել է պրակտիկայի համապատասխան հարթակները, որին կցվել են թե՛ պրակտիկայի ղեկավարները, թե՛ ուսանողները:

Ամբիոնի վարիչ Թ. Ազատյանն առաջարկեց հաստատել 2019-2020 ուստարվա 4-րդ կուրսերի, 2-րդ կիսամյակի հետաձգված պրակտիկայի կազմակերպման գործընթացը:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. Մինչ օրակարգի երկրորդ հարցին անդրադառնալը՝ Թերեզա Ազատյանը նշեց, որ 2020-2021 ուստարում ստեղծվել են էլեկտրոնային դասացուցակներ, որը ի տարբերություն նախորդ ուսումնական տարվա նորովի մոտեցում է, որն էլ իր հերթին չի բացառում ցանկացած պահի մշտադիտարկման գործընթացի իրականացում:

Հետևաբար ամբիոնի վարիչը ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմին հորդորեց լինել առավել ուշիմ, հավուր պատշաճ կազմակերպել առցանցձևաչափով իրականացվող բոլոր դասընթացները, հետևել կազմակերպչական բոլոր չափանիշներին:

Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս Մարինա Մկրտչյանը ներկայացնելով 2020-2021 ուստարվա ամբիոնի դասախոսների Google classroom էլ. հարթակի մշտադիտարկման արդյունքները, նշեց, որ բավականին հաճախակի են տեղի ունենում մշտադիտարկումներ, որի ժամանակ վեր են հանվում հիմնական խնդիրները, բացթողումները: Մ. Մկրտչյանը նշեց, որ իր իսկ կողմից կատարված վերջին մշտադիտարկման արդյունքում որոշ դասախոսներ անհատապես տեղեկացվել են, որ վերանայեն դասընթացների առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, հարցաշարերն ու դասախոսական նյութերը: Մ. Մկրտչյանը հորդորեց դասախոսներին հատկապես ուշադիր լինել առարկայական նկարագրերը նոր ձևաչափով տեղադրելու, ինչպես նաև համապատասխան ֆայլերը առանձին-առանձին տեղադրելու, թեմա տիրույթում համապատասխան թեմաներով վերնագրելու հարցում: Մ. Մկրտչյանը գործնականորեն մանրակրկիտ ցուցադրեց հայտարարություն տեղադրելու կարգը և հորդորեց դասախոսներին հնարավորինս պահպանել պահանջվող ձևաչափը:

Ամբիոնի վարիչ Թ. Ազատյանն ու Google classroom էլ. հարթակի պատասխանատու Մ. Մկրտչյանը կարևորեցին ըստ դասացուցակի հատկացված օրերի և ժամերի խստիվ պահպանման անհրաժեշտությունը, սակայն միևնույն ժամանակ չբացառեցին հնարավոր տեղափոխությունները, միևնույն ժամանակ ցանկացած փոփոխության մասին պարտադիր կերպով պետք է կատարել գրառում Google classroom էլ. հարթակում և յուրաքանչյուր տեղափոխություն պետք է նախապես համաձայնեցնել ուսանողների հետ:

Ամբիոնի վարիչ Թ. Ազատյանն առաջարկեց 2020-2021 ուստարվա ամբիոնի դասախոսների Google classroom էլ. հարթակի մշտադիտարկման արդյունքները համարել գոհացուցիչ:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ընթացիկ հարցեր

- **Լսեցին** – Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Թերեզա Յուրիի Ազատյանին երաշխավորելու ատենախոսություններ ղեկավարելու հարցը:

Արտահայտվեցին – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտներ՝ Զ. Զոհրաբյանը, Ա. Սվաջյանը, Կ. Սարուխանյանը, Ս. Մուրադյանը, Ա. Մանուկյանը:

Որոշեցին – միջնորդել հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդին հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Թերեզա Յուրիի Ազատյանին երաշխավորելու ատենախոսություններ ղեկավարելու հարցը:

Ամբիոնի նիստի 22 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահ՝

Թերեզա Ազատյան

Նիստի քարտուղար՝

Սվետլանա Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության
ամբիոնի 2020թ. նոյեմբերի 16-ի առցանց նիստի

/ առցանց նիստի հղումը՝ <https://meet.google.com/xtu-odux-yxc?authuser=0/> /

Օրակարգ

1. Առցանց դասապրոցեսի և մշտադրտարկման արդյունքների քննարկում,
վերլուծում, հաստատում:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ մ.գ.թ. դոցենտ Թ. Ազատյան

դասախոս Մ. Մկրտչյան

2. Ավարտական աշխատանքների /առկա, հեռակա/ և մագիստրոսական թեզերի
կատարման ընթացքի մասին քննարկում:

Զեկուցող՝ գիտական ղեկավարներ

3. Մագիստրատուրա II կուրսերի պրակտիկայի արդյունքերի՝ քննարկում, ամփոփում, հաստատում:

Զեկուցող՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Վ.Մարուքյան

Մինչ ամբիոնի նիստի սկսելը ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը երկրում տիրող պատերազմական իրադրության հետ կապված առաջարկեց խորհրդի անդամներին մեկ րոպե լռությամբ հարգել բոլոր զոհերի հիշատակը:

Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից մեկ րոպե լռությամբ հարգանքի արժանացավ նաև ամբիոնի դասախոս Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսորի պաշտոնակատար Կամարնիկ (Երջանիկ) Հունանի Գևորգյանը:

1. Օրակարգի առաջին հարցին անդրադառնալով ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը ընդգծեց ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից ուսումնական գործընթացի առցանց ձևաչափով հավուր պատշաճ կազմակերպելու կարողությունները, որը փաստում է նաև մշտադիտարկման արդյունքները: Թ. Ազատյանը նշեց, որ մշտադիտարկումները անընդհատ գործընթաց են իրենցից ներկայացնում, որի ժամանակ վեր են հանվում թե՛ ուսանողների, թե՛ դասախոսների կողմից թույլ տված հիմնական խնդիրները, բացթողումները: Վեր հանված բոլոր խնդիրներն ու բացթողումները տեղեկացվում և քննարկվում են համապատասխան դասախոսների հետ: Կարևորվեց նաև հիմքերի ներկայացումը, որոնք կփաստեն դասի մեկնարկն ու ավարտը համապատասխան հարթակներում:

Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Թ. Ազատյանի և ամբիոնի դասախոս Մարինա Մկրտչյանի կողմից շեշտադրվեց նաև, որ 02.11.2020-ից 06-11.2020 ընթանալու է 2020-2021 ուսումնական տարվա հեռակա ուսուցման համակարգի ԲԿԾ-ի 2-րդ և 3-րդ կուրսերի, ինչպես նաև 16.11.2020-20.11.2020-ը՝ ԲԿԾ-ի 1-ին կուրսերի տեսական ուսուցումը, որը նույնպես կազմակերպվել է առցանց ձևաչափով: Համապատասխանաբար ստեղծվել են բոլոր հարթակները, կցվել են թե՛ դասախոսները, թե՛ ուսանողները: Մ. Մկրտչյանը հորդորեց դասախոսներին լինել ուշադիր և

հետևողական գործընթացի կազմակերպման և ապահովման հարցում, ինչպես նաև կարևորվեց ըստ ներկայացված գրաֆիկի հատկացված օրերի և ժամերի խստիվ պահպանման անհրաժեշտությունը /կից ներկայացված է/:

Ամբիոնի վարիչ Թ. Ազատյանը ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմին առաջակրեց առցանց դասապրոցեսի և մշտադրտարկման արդյունքները համարել գոհացուցիչ և հաստատել արդյունքները:

Ամբիոնի նիստի 21 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը ներկայացրեց օրակարգի երկրորդ հարցը, այնուհետև առաջարկեց ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմին, բոլոր գիտական ղեկավարներին ներկայացնելու ավարտական աշխատանքների /առկա, հեռակա/ և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին: Կարևորվեց աշխատանքների հետևողական կազմակերպումը, ուսանողների հետ առցանց և առերես հանդիպումների կազմակերպումը:

Այնուհետև խոսքը տրվեց գիտական ղեկավարներին, ովքեր բանավոր և գրավոր տարբերակով մանրամասն ներկայացրեցին թե՛ II կուրսերի մագիստրոսական թեզերի, թե՛ ավարտական աշխատանքների /առկա և հեռակա/ կատարման ընթացքը, կազմակերպվող աշխատանքները: Դասախոսները հանգամանորեն ներկայացրեցին մագիստրատրոսական աշխատանքների, ավարտական աշխատանքների կատարման ընթացքը: Որոշ ղեկավարների կողմից շեշտադրվեցին մի շարք ուսանողների անուններ, ովքեր ղեկավարների հետ համահեղինակությամբ ունեն արդեն իսկ տպագրված, ինչպես նաև տպագրության հանձնված գիտական հոդվածներ:

Ամբիոնի վարիչ Թ. Ազատյանը հորդորեց բոլոր ղեկավարներին հատկապես խնդրահարույց ուսանողների հարցում լինել առավել հետևողական, անհրաժեշտության դեպքում ներկայացնել զեկուցագիր:

Ամբիոնի վարիչ Թ. Ազատյանը ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմին առաջակրեց ավարտական աշխատանքների /առկա, հետակա/ և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը համարել գոհացուցիչ և հաստատել արդյունքները:

Ամբիոնի նիստի 21 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. Մագիստրատուրա II կուրսերի պրակտիկայի արդյունքերը ներկայացրեց մ. գ. թ. դոցենտ Վ. Մարուքյանը: Համաձայն որի ընդգծվեց, որ ամբոնում իրենց մանկավարժահետազոտական պրակտիկան առցանց ձևաչափով իրականացրել են 34 մագիստրոս: Յուրաքանչյուր մագիստրոս ըստ սահմանված կարգի իրականացրել 12 ակտիվ և 6 պասիվ դասերի մասնակցություն: Բոլոր մագիստրոսների համար ստեղծված են եղել համապատասխան հարթակներ, որտեղ էլ թե՛ մագիստրոսները, թե՛ դեկավարները ցուցաբերել են ակտիվ մասնակցություն: Ողջ պրակտիկայի ընթացքում եղել է 3 խնդրահարույց ուսանող, որը պայմանավորված է եղել մի ուսանողի պարագայում ԿՈՎԻԴ-19 համավարակով և դժվարություններ է ունեցել հարթակում հաճախակի նյութեր տեղադրելու և ակտիվություն ցուցաբերելու հարցում, իսկ մյուս երկու մագիստրոսները սահմանամերձ հատվածներում են բնակվում, ովքեր նույնպես մասնակիորեն պասիվ են եղել հարթակում: Ընդհանուր առմամբ մագիստրատուրա II կուրսերի պրակտիկայի արդյունքերը Վերա Մարուքյանը առաջարկեց գնահատել դրական և գոհացուցիչ:

Ամբիոնի նիստի 21 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահ՝

Թերեզա Ազատյան

Նիստի քարտուղար՝

Սվետլանա Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության

ամբիոնի 2020թ. դեկտեմբերի 4-ի առցանց նիստի

Օրակարգ

1. Ամբիոնի գործող հայցորդների ատեստավորման հարցի քննարկում:

Զեկուցող՝ գիտական ղեկավարներ

2. Ընթացիկ հարցեր

1. **Լսեցին** – ամբիոնի գործող թվով 8 հայցորդների ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտներ՝ Թերեզա Ազատյանը, Մարինե Մարությանը, Ալինա Մանուկյանը, Կիմ Մարուխանյանը, Արաքսյա Սվաջյանը:

Որոշեցին – ատեստավորել ամբիոնի գործող թվով 8 հայցորդներին:

Ամբիոնի նիստի 21 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

- **Ընթացիկ հարցեր**

Լսեցին – Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից ստորև ներկայացված մեթոդական ձեռնարկների հաստատման հարցը.

1. Ինչպես խթանել սովորողների ներառումը դասարանում
2. Ինչպես կարգավորել երեխաների վարքը չանտեսելով նրա առանձնահատկությունները
3. Ներառական կրթության կազմակերպումը ՆՈՒՀ-ում

Արտահայտվեցին – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտներ՝ Թերեզա Ազատյանը, Լիլիթ Կարապետյանը, Մարինե Մարությանը, Ալինա Մանուկյանը, Արաքսյա Սվաջյանը:

Որոշեցին – միջնորդել ֆակուլտետի խորհրդին՝ հաստատելու Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից ներկայացված մեթոդական ձեռնարկների հարցը:

Ամբիոնի նիստի 21 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

- **Լսեցին** – 2019թ դեկտեմբերի 24-ին հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնում հայցորդ ձևակերպված Մերի Ալեքսանյանի հայցը, ով սեպտեմբերի 9—ն իր կողմից ներկայացված դիմումին համաձայն ցանկություն է հայտնել որպես հայցորդ ներկայանալու և ձևակերպվելու միևնույն ֆակուլտետի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնում:

Մ. Ալեքսանյանը որպես հայցորդ իրեն հատկացված ժամանակահատվածում չի կողմնորոշվել գիտական ղեկավարի և աստենախոսության թեմայի հարցում և չի ունեցել թե՛ գիտական ղեկավար, թե՛ աստենախոսության թեմա: Միևնույն ժամանակ հայցորդը սահմանված կարգով կատարել է վարձավճարը:

Արտահայտվեցին – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտներ՝ Թերեզա Ազատյանը, Զարեկա Զոհրաբյանը, Կիմ Սարուխանյանը, Արաքսյա Սվաջյանը:

Որոշեցին – միջնորդել և բավարարել Մերի Ալեքսանյանի հայցը և թույլատրել որպես հայցորդ վերաձևակերպվելու լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնում, համաձայն որի գիտական ղեկավար ընտրելու և գիտական գործունեությունը վերսկսելու լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնում:

Ամբիոնի նիստի 21 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահ՝

Թերեզա Ազատյան

Նիստի քարտուղար՝

Սվետլանա Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5.

Խ. Արույանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության
ամբիոնի 2020թ. դեկտեմբերի 25-ի առցանց նիստի
<https://meet.google.com/xtu-odux-yxc?authuser=0>

Օրակարգ

1. Մագիստրատուրա առաջին կուրսերի մագիստրոսական թեզերի
կատարման ընթացքի քննարկում:

Ջեկուցողներ՝ ամբիոնի գիտական ղեկավարներ

2. Բակալավր 4-րդ կուրսերի պրակտիկայի ընթացքի և պաշտպանության
ընթացքի քննարկում:

Ջեկուցող՝ մ. գ. թ. դոցենտ Վ. Մարուքյան

1. Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը առաջարկեց մագիստրատուրա
առաջին կուրսերի մագիստրոսական թեզերի ղեկավարներին բանավոր, ապա մինչ
դեկտեմբերի 29-ը նաև գրավոր, ներկայացնել թեզերի կատարման ընթացքի մասին:

Մագիստրոսական թեզերի ղեկավարներից շատերը որպես խնդրահարույց
դեպքեր նշեցին որոշ ուսանողների պասիվությունը, որը պայմանավորված էր երկրում
տիրող պատերազմական իրավիճակով, ինչպես նաև առցանց ձևաչափով դասերի
կազմակերպման ընթացքով: Միևնույն ժամանակ ընդգծվեցին որոշ ուսանողների
անուններ, ովքեր այնուամենայնիվ ղեկավարների հետ չեն պահել կապը, չեն մասնակցել

կազմակերպված առցանց հանդիպում քննարկումներին, չեն ներկայացրել համապատասխան նյութեր, ինչպես նաև մշակումներ թեմաների շրջանակներում:

Որպես խնդրահարույց դեպք գրեթե բոլոր ղեկավարները ընդգծեցին այլ համալսարաններից և այլ ֆակուլտետներից մագիստրատուրան ֆակուլտետում շարունակող ուսանողները, քանի որ որոշ դեպքերում իրազեկված չեն լինում համապատասխան խնդրին:

Ամբիոնի վարիչը հորդորեց մագիստրոսական թեզերի բոլոր ղեկավարներին լինել հետևողական, անհրաժեշտության և խիստ ծայրահեղության դեպքում մինչ ղեկտեմբերի 29-ը գրել զեկուցագրեր համապատասխան ուսանողների համար:

Թերեզա Ազատյանը մագիստրոսական թեզերի ղեկավարներին հորդորեց հետևողական լինել մագիստրոսների հետ համահեղինակությամբ գիտական հոդվածներ մշակելու և տպագրելու հարցում:

Ամբիոնի վարիչը բոլոր ղեկավարներին հորդորեց նաև գրավոր հաշվետվություններում նշել բոլոր դիտարկումները, խնդրահարույց դեպքերը և լինել օբյեկտիվ: Օբյեկտիվ լինելը կարևորվեց նաև մագիստրոսական աշխատանքների գնահատման գործընթացում:

Թերեզա Ազատյանը առաջարկեց մագիստրատուրա առաջին կուրսերի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը գնահատել բավարար:

Ամբիոնի նիստի 21 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. Բակալավր 4-րդ կուրսերի պրակտիկայի ու պաշտպանության ընթացքը ներկայացրեց ամբիոնի պրակտիկայի պատասխանատու, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Վերա Մարուքյանը: Նշվեց, որ բակալավր կրթական ծրագրի չորրորդ կուրսերի պրակտիկան եղել է վեց օրյա և տևել է հինգ շաբաթ: Յուրաքանչյուր կուրսի համար ստեղծվել են Classroom հարթակներ, ուսանողներին տրամադրվել են Meet հղումներ, որով էլ իրականացել է ղեկավարների և ուսանողների

հանդիպում-քննարկումները: Բոլոր ուսանողները առանձնացել են իրենց ակտիվությամբ, ղեկավարների հետ մշտապես կապի ապահովմամբ: Հաճախ կազմակերպվել են հանդիպումներ, ղեկավարների հետ քննարկումներ, որի մասին վկայում է պրակտիկայի համար նախատեսված հարթակում կատարված դիտարկումները, գնառումները, նյութերի տեղադրումը: Ուսանողների հետ հանդիպումներ են կազմակերպվել նաև ամբիոնի վարիչի և պրակտիկայի պատասխանատուի հետ, որին մասնակցել են նաև պրակտիկայի ղեկավարները:

Որպես ուժեղ կողմ բոլոր ուսանողները նշել են ժամանակի մեջ տեղավորվելու հնարավորությունը, ղեկավարների հետ քննարկումների հեշտ կազմակերպումը: Պաշտպանությունները լինելու են հունվարի սկիզբ և առցանց ձևաչափով:

Թերեզա Ազատյանը առաջարկեց բակալավր 4-րդ կուրսերի պրակտիկայի և պաշտպանության ընթացքը համարել գոհացուցիչ:

Ամբիոնի նիստի 21 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահ՝

Թերեզա Ազատյան

Նիստի քարտուղար՝

Սվետլանա Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության
ամբիոնի 2021թ. փետրվարի 15-ի առցանց նիստի

<https://meet.google.com/xtu-odux-yxc?authuser=0>

Օրակարգ

1. Էլեկտրոնային մատյանների վարման կարգի մասին:

Զեկուցող՝ դասախոս Մարինե Մկրտչյան

2. 2020-2021 ուս. տարվա ընդունելության մասին

Զեկուցողներ՝ մ.գ.թ. դոցենտներ Ինեսսա Հարությունյան, Սվետլանա Մուրադյան

3. Ընթացիկ հարցեր

1. Առավել մանրամասն տեղեկատվության հաղորդման նպատակով ամբիոնի դասախոս Մարինե Մկրտչյանը պատահականության սկզբունքով ընտրեց և ամբիոնի դասախոսների ուշադրությանը ներկայացրեց մեկ դասընթաց և գործնականորեն

ցուցադրեց էլեկտրոնային մատյանների վարման կարգը: Նշվեց, որ ամբիոնի մասնագետի կողմից յուրաքանչյուր դասընթացի էլեկտրոնային մատյաններում մուտքագրվել են ուսանողների անունները, իսկ դասախոսներին մնում է մուտքագրել յուրաքանչյուր օրվա ներկա բացակայի արդյունքները, ինչպես նաև ամսաթիվը: Կարևորվեց նաև դասախոսությունների և գործնական ժամերի դասախոսների ներկա բացակայի արդյունքների մուտքագրումը ըստ ամսաթվերի ճիշտ հերթականության պահպանման: Ընդգծվեց նաև, որ ուսանողները կարող են միայն դիտել ներկա բացակայի արդյունքները և այդ դաշտում որևէ գրառումներ, փոփոխություններ անելու հնարավորություն չունեն:

Ամբիոնի վարիչ մ.գ.թ.դոցենտ Թերեզա Ազատյանը ներկայացված հարցը առաջարկեց ընդունել ի գիտություն, համաձայն որի ամբիոնի նիստի 21 անդամներից նիստին ներկա էին 18-ը, կողմ քվեարկեց 18-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. 2020-2021 ուս. տարվա ընդունելության շուրջ ամբիոնի կողմից կազմակերպվող աշխատանքների և նախաձեռնությունների մասին խոսեց մ.գ.թ. դոցենտ Ինեսսա Հարությունյանը: Կարևորելով ընդունելության հարցը, ինչպես նաև ներկայիս օրերում համացանցի զգալի դերն ու նշանակությունը՝ Ի. Հարությունյանը առաջարկեց ամբիոնի դասախոսներին նկարել 2 բոպե տևողությամբ տեսանյութ, որը կպատմի ամբիոնի գործող մասնագիտությունների, դրանց կարևորության և անհրաժեշտության մասին: Ի. Հարությունյանը նշեց, որ ամբիոնի դասախոսների կողմից ներկայացված տեսանյութերը կմշակվեն և կտեղադրվեն համացանցում, որը ցանկալի է տարածվի թե՛ դասախոսների, թե՛ ուսանողների կողմից հնարավորինս բազմաձևալ լսարան ապահովելու համար: Այս տեսանկյունից կարևորվեց նաև ամբիոնի դասախոսների զգալի մասի որպես գործնական աշխատողների առկա հնարավորությունները, որը նույնպես իր հերթին բավականին իրազեկող է և հետաքրքրական: Միևնույն ժամանակ առաջարկվեց տեսանյութն ավարտել մեկ համընդհանուր խոսքով:

Ներկայացված առաջարկի շրջանակներում ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանի կողմից առաջարկվեց անմիջապես ձեռնամուխ լինել նախաձեռնությանը և համընդհանուր քննարկման արդյունքում որոշվեց, որ 2 ընդհանուր տեսանյութ կներկայացնեն ամբիոնի դասախոսներ Լուսինե Բաբայանը, Մարինե Մարությանը:

2021-2022 ուս. տարվա ընդունելության շուրջ կազմակերպվող աշխատանքները ներկայացրեց մ.գ.թ. դոցենտ Սվետլանա Մուրադյանը: Ս. Մուրադյանը կարևորեց մասնագիտական իրազեկման աշխատանքները, համաձայն որի ընդգծեց, որ պայմանավորվածություն է ձեռք բերվել քաղաք Երևանի թիվ 6 ավագ դպրոցների /Երևանի թիվ 2 ավագ դպրոց, Երևանի թիվ 109 ավագ դպրոց, Երևանի Սամվել Գևորգյանի անվան թիվ 189 ավագ դպրոց, Երևանի Թաթուլ Կրպեյանի անվան թիվ 62 ավագ դպրոց, Երևանի Արամայիս Երզնկյանի անվան թիվ 118 ավագ դպրոց, Երևանի թիվ 119 ավագ դպրոց/ հետ: Համապատասխանաբար ամբիոնի դասախոսները իրենց ակտիվ մասնակցությունն են ցուցաբերել կազմակերպված գործընթացին և այցելել են վերոնշյալ դպրոցները, հանդիպել են ավագ դասարանների սաներին, իրականացրել են մասնագիտական իրազեկման աշխատանքներ: Միևնույն ժամանակ փետրվարի 3-ին մասնագիտական իրազեկման աշխատանքներ իրականացնելու նպատակով պայմանավորվածություն է ձեռք բերվել Արմավիրի մարզի թիվ 4 հինգ ավագ դպրոցների /արմավիրի թիվ 4 ավագ դպրոց, Արմավիրի Ռուբեն Եղոյանի անվան թիվ 1 ավագ դպրոց, Վաղարշապատի Գրիգոր Նարեկացու անվան թիվ 2 ավագ դպրոց, Վաղարշապատի Մաքսիմ Գորկու անվան թիվ 5 ավագ դպրոց/ հետ, որի ուղեվորափոխադրումը իրականացվել է համալսարանի կողմից տրամադրված փոխադրամիջոցով, որին նույնպես իր մասնակցությունն է ցուցաբերել ամբիոնը: Մասնագիտական իրազեկման նպատակով իրականացվել է բաց դռների օր ավագ դպրոցի սաների համար, որին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել թե՛ ամբիոնի դասախոսները, թե՛ ֆակուլտետի ուսանողական խորհուրդը: Ս. Մուրադյանը ընդգծեց նաև, որ մասնագիտական իրազեկման աշխատանքների կազմակերպման գործընթացում իրենց ուրույն տեղն ու դերն ունեն նաև ֆակուլտետի ուսանողական

խորհրդի ներկայացուցիչները, ովքեր նույնպես յուրովի ակտիվ մասնակցություն են ցուցաբերում կազմակերպվող աշխատանքներում:

Ամբիոնի վարիչ մ.գ.թ. դոցենտ Թերեզա Ազատյանը ներկայացված հարցը առաջարկեց համարել գոհացուցիչ, համաձայն որի ամբիոնի նիստի 21 անդամներից նիստին ներկա էին 18-ը, կողմ քվեարկեց 18-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ընթացիկ հարցեր

- Ամբիոնի վարիչ մ.գ.թ. դոցենտ Թերեզա Ազատյանը խոսելով առցանց ձևաչափով կազմակերպվող դասերի մասին կարևորեց էլեկտրոնային հարթակում ամբիոնի դասախոսներից պահանջվող գործառույթների հավուր պատշաճ իրագործումը: Համաձայն որի նշեց, որ ամբիոնի կողմից կատարված մշտադիտարկման արդյունքում գրանցվել են որոշակի բացթողումներ, մասնավորապես պայմանավորված առարկայական նկարագրերի և տրոհումների բացակայության հետ: Թ. Ազատյանը հորդորեց ամբիոնի դասախոսներին լինել հետևողական և հնարավորինս արագ լրացնել նմանատիպ բոլոր բացթողումները:

Նիստի նախագահ՝

Թերեզա Ազատյան

Նիստի քարտուղար՝

Սվետլանա Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության
ամբիոնի 2021թ. մարտի 23-ի առցանց նիստի

<https://meet.google.com/xtu-odux-yxc?authuser=0>

Օրակարգ

1. 2020-2021 ուս.տարվա ավարտական աշխատանքերի և մագիստրոսական թեզերի նախնական լսումների և նախնական պաշտպանության մասին:

Ջեկուցող՝ մ.գ.թ. դոցենտ Թերեզա Ազատյան

2. Մագիստրատուրա 1-ին կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքների քննարկում, հաստատում:

Զեկուցող՝ մ.գ.թ. դոցենտ Վերա Մարուքյան

3. Ընթացիք հարցեր:

1. 2020-2021 ուսումնական տարվա ավարտական աշխատանքերի և մագիստրոսական թեզերի նախնական լսումների և նախնական պաշտպանության հարցը ներկայացրեց ամբիոնի վարիչ մ.գ.թ. դոցենտ Թերեզա Ազատյանը: Թ. Ազատյանը նշեց, որ ըստ ներկայացված ժամանակացույցի մեկնարկում են թե՛ բակալավր կրթական ծրագրի /առկա և հեռակա/, թե՛ մագիստրոսի կրթական ծրագրի ուսանողների ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի նախնական լսումները /կից ներկայացված է/:

Ներկայացված ժամանակացույցը կազմվել է այնպես, որ չխաթարվի ուսանողների ուսումնառությունը: Ներկայացված ժամանակացույցերը ուղարկվել են թե ամբիոնի դասախոսներին, թե ուսանողներին: Թ. Ազատյանը նշեց նաև, որ նախնական լսումներին ուսանողներից չի պահանջվելու ներկայացումների ցուցադրում, պարզապես ուսանողները հակիրճ պետք է ներկայացնեն իրենց կողմից կատարված աշխատանքը, առկա խնդիրները: Ընդգծվեց նաև, որ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կազմության ձևաչափերում փոփոխություններ չեն դիտվելու և պետք է հիմք ընդունել 26.11.2019 թվականի գիտական խորհրդի նիստին հաստատված կարգը:

Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմին հորդորեց գրավոր ներկայացնել 2-րդ կիսամյակի հաշվետվությունները, որտեղ հատկապես հետևողական լինել խնդրահարույց ուսանողների հարցում: Իսկ առկա բոլոր խնդրահարույց դեպքերի հետ պայմանավորված Թ. Ազատյանը ընդգծեց զեկուցագրերի պարտադիր ներկայացնելու անհրաժեշտությունը:

Ամբիոնի վարիչ մ.գ.թ. դոցենտ Թերեզա Ազատյանը ներկայացված հարցը առաջարկեց ընդունել ի գիտություն, համաձայն որի ամբիոնի նիստի 21 անդամներից նիստին ներկա էին 18-ը, կողմ քվեարկեց 18-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

